

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԱՍԵՐԻԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Ամերիկյան նկարագրական լեզվաբանական դպրոցը Կառուցվածքային լեզվաբանության երեք հիմնական դպրոցներից մեկն է, որի գլխավոր հիմնադիրներն են Էդուարդ Սեպիրը և Լեոնարդ Բլումֆիլդը:

1. Ե. Սեպիրի տեսությունը շատ մոտ է Ֆ. դը Սոսյուրի հայեցակարգերին այն է՝ նա նույնպես լեզվում առանձնացնում է ֆիզիկական և իդեալական համակարգերը (կաղապար):

Ըստ Ե. Սեպիրի՝ հնչյունաբանական կաղապարը, որը բնորոշում է ժամանակը, հարաբերությունը և հնչյունաբանական տարրերի գործառնությունը, կարող է պահպանվել երկար ժամանակ, անգամ իր հնչյունաբանական բովանդակության փոփոխման դեպքում, սակայն երկու լեզու կարող է ունենալ նման հնչյուններ, բայց տարբեր հնչյունաբանական կաղապարներ: Հենց այս գաղափարների հետ են կապված Ե. Սեպիրի և Բ. Ուորֆի «լեզվաբանական հարաբերականության»¹ վարկածները, որոնք հետևյալն են՝

1. քանի որ յուրաքանչյուր լեզվում կա մի «անկրկնելի» կաղապար, յուրաքանչյուր լեզու ինքնուրույն է մասնատում իրականությունը և կապում այդ լեզվով խոսողներին: Լեզուն է ձևավորում միտքը, տարբեր լեզուներով խոսող մարդիկ տարբեր ձևով են ընկալում աշխարհը: Լեզուն ստիպում է բոլոր խոսողներին մտածել այդ բոլոր կառույցների շուրջ՝ անկախ նրանից, թե նա հարմար է գտնում համապատասխան տեղեկատվությունը իր հաղորդակցման համար թե ոչ:

2. Լեզվական կաղապարները կապված են մշակութային-սոցիալական կաղապարների հետ. օրինակ՝ մի լեզվի բայական համակարգը տարբերվում է մյուս լեզվի քերականական կարգերի համակարգերից, որոնք նկարագրում են գործողության և շարժման բոլոր կողմերը:

Այստեղ հարկ է նշել Գ. Հոյերին, ըստ որի գլխավոր հայեցակարգը աշխարհի հայեցակարգն է, որը գտնվում է շարժման մեջ²:

Սեպիրի և Ուորֆի «լեզվաբանական հարաբերականության» վարկածը տեսություն չդարձավ, որովհետև դեռևս չի հաջողվել կատարել համոզիչ գիտափորձեր, որոնք կհաստատեին նրա գլխավոր դրույթները: Սակայն այն

¹ Э. Сепир, Язык, М.-Л., 1934, стр. 96-102

² Г. Хойер, Антропологическая лингвистика, вып. IV, стр. 291-294

մեծ մասամբ խթանեց տվյալ բնագավառում տեղի ունեցող հետաքրքրաշարժ հետազոտություններին, որոնք նախկինում չէին օգտագործվել ոչ լեզվաբանության մեջ, ոչ էլ հոգեբանության մեջ: Այնուամենայնիվ, իզուր չէ, որ Սեպիրը, վերլուծելով լատիներեն հետևյալ դարձվածը *illa alba femina quae venit* (նույն կինը, որը անցնում է), ցույց է տալիս, որ տրամաբանորեն միայն հուղվմ է պարունակում նրա մեջ արտահայտություն. մնացած քերականական կարգերը ընդհանրապես պետք չեն, կամ էլ չեն վերաբերվում նախադասության շարահյուսության ձևի էությանը³:

II. Ամերիկյան լեզվաբանության մյուս դասական ներկայացուցիչը Լ. Բլումֆիլդն է, որը որոշ առումով է. Սեպիրի ուղիղ հակապատկերն էր, քանզի նպատակադրվել էր ստեղծել հասկացությունների ուրույն, կառուցողական և հաջորդաբար կառուցված մի համակարգ, որով կարելի կլիներ համաժամանակյա նկարագրել լեզվի յուրաքանչյուր մակարդակը:

Լ. Բլումֆիլդը Սոսյուրի պես փորձել էր մասնատել լեզուն: Նրա կարծիքով, լեզվաբանության ուսումնասիրության առարկան ոչ թե հնչույթներն են ու նշանակությունները, այլ «որոշակի հնչույթների զուգորդումը որոշակի նշանակությունների հետ»: Հնչույթներից հետո Բլումֆիլդը տարբերակում է իմաստաբանական մակարդակը, որը նա բաժանում է քերականության և բառագիտության: Ըստ նրա՝ քերականության և բառագիտության մեջ լեզվաբանին պետք է հետաքրքրի ոչ թե բառերի կամ ձևերի կոնկրետ նշանակությունները, այլ դրանց տարբերության փաստը⁴: Այն ձևերը, որտեղ որոշակի հնչյունները զուգորդվում են որոշակի նշանակությունների հետ, Բլումֆիլդը համարում էր լեզվական (ի տարբերություն հնչույթների, որոնք լեզվական ձևեր չեն հանդիսանում): Նա սուբստիտուտ (փոխարինող) է կոչում այն լեզվական կառուցվածքը, որը որոշակի պայմաններում փոխարինում է մեկ այլ կառուցվածքի և ըստ այդմ՝ առանձնացնում է շարահյուսական կառուցվածքների 2 հիմնական տեսակ՝

1. էկզոցենտրիկ (1 կենտրոն)
2. էնդոցենտրիկ (2 կենտրոն)

Որպես օրինակ՝ վերցնենք հետևյալ նախադասությունը՝ «փոքրիկ աղջիկը արագ քայլում էր»⁵: Այստեղ «փոքրիկ աղջիկը» կադապարը կարելի է փոխարինել ուղղակի «աղջիկը», իսկ «արագ քայլում էր» կադապարը՝ «քայլում էր»

³ Б. Л. Уорф, Отношение норм поведения и мышления к языку. В: "История языкознания XIX и XX веков в очерках и извлечениях", часть II, стр. 67

⁴ Л. Блумфилд, Язык. Пер. с англ., М., 1968, стр. 29

⁵ Л. Н. Засорина. Введение в структурную лингвистику, М., "Высшая Школа", 1974, стр. 132-135

(էկզոցենտրիկ), իսկ «աղջիկը քայլում էր» կադապարը էնդոցենտրիկ է, քանի որ հնարավոր չէ փոխարինել: Այստեղից Բլումֆիլդը առաջարկում է այս բաժանումը համարել նախադասության կառուցվածք, ուստի նախադասությունը բաժանվում է անվանական և բայական խմբերի. օրինակ՝ «փոքրիկ աղջիկը» կադապարը գոյականական դարձվածք է, իսկ «արագ քայլում էր» կադապարը՝ բայական դարձվածք:

Ընդհանուր առմամբ, սա է Բլումֆիլդի կողմից մշակված որոշակի լեզվաբանական հասկացությունների համակարգը, որի հիման վրա 1930-50-ական թթ. ստեղծվեց այսպես կոչված նկարագրական լեզվաբանությունը: Մասնավորապես, Բլումֆիլդի մտքերը ուսումնասիրվեցին տարբեր ամերիկյան լեզվաբանների կողմից՝ Ջ. Դարիս, Բ. Բլոկ, Թրեյքեր, որոնք մշակում էին հնչյութաբանությունը և ձևութաբանությունը՝ պահանջելով բացառել իմաստի գործոնը: Սակայն նրանց հաջողված չի կարելի համարել:

Հիշատակության է արժանի 1942թ. Ջ. Դարիսի կողմից առաջ քաշված ձևութային հատույթների նույնականացման սկզբունքը⁶, որը առաջարկում է նույնականացման հետևյալ 3 հիմնական պայմանները՝

1) նրանք պետք է ունենան մեկ իմաստ. օրինակ՝ *Utre-լինել, avoir-ունենալ ֆրանսերենում, sein-լինել և haben-ունենալ գերմաներենում* միայն այն դեպքերում, երբ նրանք ծառայում են ժամանակների վերլուծական ձևերի կառուցման համար:

2) Երբեք չպետք է հանդիպեն նույն լեզվական համատեքստերում. օրինակ՝ անգլերենում հակադրական դիստրիբուցիայի մեջ են գտնվում *-ed* և *-ing* մորֆերը, որոնք հետևաբար պատկանում են տարբեր ձևույթների (*She was charmed* և *she was charming*):

3) Նրանց ընդհանուր բաշխումը պետք է հավասար լինի նույն դասին պատկանող չտարբերակվող ձևույթների բաշխմանը. օրինակ՝ ռուսերենի տրական հոլովի *еѣ* և *ею* ձևույթները (*зем.теѣ* և *зем.тею*):

Տարբեր լեզուներում այս 3 հատույթներից կազմվում են տարբեր տարրեր: Բաշխումային վերլուծության մեջ կարևոր դեր ունի բաշխման հասկացությունը: Յուրաքանչյուր լեզվական միավոր ունի որոշակի համատեքստերում հանդիպելու սահմանափակումներ, այսինքն՝ յուրաքանչյուր լեզվական միավոր ունի իր ուրույն բաշխումը: Երկու հատույթ կարող են լինել համարժեք կամ ոչ համարժեք՝

⁶ Z. Harris, Structural Linguistics, 1961; Papers in Structural and Transformational Linguistics, 1970 (Holland), p. 76-85

1) համարժեք են, եթե նրանք կարող են փոխարկել իրար առանց ասույթի իմաստը փոխելու. օրինակ՝ հայերենում քմայնացած կամ կոշտ տ-ով⁷ մաշոյան-մաշ(ծ)յան: Բաշխումային հարաբերությունների այս տեսակը կոչվում է ազատ բաշխում կամ ազատ տարբերակվածության հարաբերություն: Այսպիսի հարաբերություն ունեցող հատույթները վերաբերում են միևնույն տարրին:

2) Ոչ համարժեք են, եթե փոխարկման ժամանակ փոխվում է ասույթի իմաստը: Այսպիսի բաշխումային հարաբերությունը կոչվում է հանադրություն բաշխում. օրինակ՝ դար-քար-սար-լար: Անհամարժեք հատույթները կազմում են տարբեր տարրեր (հնչույթ, ձևույթ, բառույթ):

Ընդհանուր առմամբ, թեև ամերիկյան դեսկրիպտիվիստներին չհաջողվեց հասնել այն նկարագրական տեխնիկայի իդեալին, որին նրանք ձգտում էին, այնուամենայնիվ մեծ է նրանց դերը կառուցվածքային լեզվաբանության հետագա զարգացման համար:

Ժամանակակից կառուցվածքային լեզվաբանությունը ժառանգել է նրանցից այն գաղափարներն ու նյութերը, որոնցից է օրինակ այն, որ լեզվաբանական կաղապարի ավելի շատ բնական ձև է ընդունում ալգորիթմը⁷:

⁷ Ю. Апресян, "Идеи и методы современной структурной лингвистики", Москва, 1966, 132-134